ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

18.07.2024 14:30

2024 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը ներկա են գտնվել «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի մեկնարկը ազդարարող հանդիսավոր արարողությանը:

Միջոցառմանը ներկա են եղել Եվրոպական միության, ՄԱԿ-ի գործակալությունների և Հայաստանի Հանրապետության պետական թիրախային գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ և այլ գործընկերներ:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդես է եկել ելույթով, որում առանձնակի կարևորել է ծրագրի նպատակները՝ ընդգծելով մասնավորապես Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդմանն ուղղված ջանքերի շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև քաղաքացիներին որակյալ անվճար իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմների ու կարողությունների զարգացումը:

Իր ելույթում ընդգծելով մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում արձանագրված ձեռքբերումները, Սիմոն Բաբայանը նաև մատնանշել է այն մարտահրավերները, որոնք դեռևս համատեղ աշխատանք են պահանջում, որպես այդպիսին նշելով նաև, իրավաբանական օգնության ոլորտում նախատեսվող հարկային նոր քաղաքականությունը, որը հանգեցնելու է իրավաբանական օգնության մատչելիության սահմանափակման:

Նշենք, որ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կատարելագործել Փաստաբանների պալատի ինստիտուցիոնալ և ռազմավարական հաղորդակցության կարողությունները, նպաստել միջազգային համագործակցության և կապերի ընդլայնմանը, Հանրային պաշտպանի գրասենյակի կառավարման և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, մասնագետների գիտելիքների շարունակական զարգացմանը՝ ապահովելով որակյալ իրավաբանական օգնության հասանելիությունը

բոլորի համար:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })